ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2014 թվականի N 77-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՍԵՎԱԲԵՐԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N 517-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 59-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 702-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. 2014 թվականի մարտի 04-ից 06-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Սևաբերդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում համակարգի գնահատման աուդիտ իրականացնելու նպատակով ստեղծել աուդիտի առաջադրանքի աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) Կոմիտաս Հունանյան - խմբի ղեկավար, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ,

2) Անահիտ Ստեփանյան - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ,

3) Արամ Գրիգորյան - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ:

2. Աուդիտորական խմբին՝ աուդիտորական առաջադրանքը իրականացնել 2011-2013 թվականների համար ներկայացված ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության և դրանց կիրառելի հիմունքներին համապատասխանության, կատարված փաստացի և դրամարկղային ծախսերի հիմնավորվածության, միավորի հաշվեկշռում գտնվող գույքի /տարածքի/ վարձակալությամբ տրամադրման, վարձավճարների հաշվարկման և գանձման գործընթացների, կազմակերպության կողմից լիազոր մարմնին ներկայացված կոմպլեկտավորման վերաբերյալ տվյալների հավաստիության, կազմակերպության ակտիվների և պարտավորությունների ամենամյա գույքագրման գործընթացի, գնման ընթացակարգերի արձանագրություններում տեղ գտած տեղեկությունների, պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների պայմանագրին համապատասխանության գնահատման նպատակով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ